ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

«Արաբկիր մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ-ի և «Արփարմացիա» ՓԲԸ-ի միջև 2020 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված ԱՄ-ԳՀԱՊՁԲ-21/ԴԵՂ-1-2 ծածկագրով պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք. Երևան «19» փետրվարի 2021թ.

«Արաբկիր մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ-ը՝ ի դեմս տնօրեն Ա. Քալանթարյանի, որը գործում է ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ) և «Արփարմացիա» ՓԲԸ-ն դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, Գնորդի և Վաճառողի միջև 2020 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված ԱՄ-ԳՀԱՊՁԲ-21/ԴԵՂ-1-2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերի երկկողմանի համաձայնությամբ որոշեցին պայմանագրով նախատեսված դեղորայքի ձեռքբերման պայմանագրի ժամկետը սահմանել սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2021 թվականը:
1.2 Կողմերը համաձայնվում են ԱՄ-ԳՀԱՊՁԲ-21/ԴԵՂ-1-2 ծածկագրով պայմանագրի Հավելված N1 շարադրել նոր խմբագրությամբ համաձայն Հավելվածի:
1.3 Պայմանագրի գինը կազմում է 107,219 (Մեկ հարյուր յոթ հազար երկու հարյուր տասնինը) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:
2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն համաձայնագրի մեկական օրինակ:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Արաբկիր» մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ | «Արփարմացիա» ՓԲԸ |
| ք. Երևան, Փափազյան 32 | Ք. Երևան, 0064, Րաֆֆու 111 |
| «Արարատբանկ» ԲԲԸ | Հայէկոնոմբանկ ԲԲԸ |
| ՀՀ 1510040795550100 | Հ/Հ 163008100220 |
| ՀՎՀՀ՝ 00115079 | ՀՎՀՀ 02305735 |
| Տնօրեն ______ Ա.Քալանթարյան | Տնօրեն ______ Ա. Հովհաննիսյան |
| /ստորագրություն/Կ.Տ | /ստորագրություն/Կ.Տ |

Հավելված
«19» փետրվարի 2021թ կնքված
ԱՄ-ԳՀԱՊՁԲ-21/ԴԵՂ-1-2 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ – ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը** | արտադրողի անվանումը և ծագման երկիրը** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր քանակը | միավոր գինը / ՀՀ դրամ | ընդհանուր գինը / ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 33651115 | Ցեֆալեքսին / ցեֆալեքսին 250մգ/5մլ, 100մլ | Հոմոֆարմ | Ցեֆալեքսին cefalexin գրանուլներ ներքին ընդունման դեղակախույթի 250մգ/5մլ, 100մլ շշիկի մեջ | հատ | 120 | 692.0 | 83,040 |
| 19 | 33671131 | Լորատադին / լորատադին 10մգ | Բորիսովի բուժպատրաստուկների գործարան | Լորատադին դեղահատ 10մգ | հատ | 30 | 18.3 | 549 |
| 25 | 33631340 | հիդրոկորտիզոն ակնաքսուք 3գ | Արփիմեդ | Հիդրոկորտիզոն (հիդրոկորտիզոնի ացետատ) ակնաքսուք 5մգ/գ պարկուճ 3գ | հատ | 12 | 750.0 | 9,000 |
| 40 | 33691136 | Սպիրտ բժշկական 1լ | Արսանիտ | Էթանոլ լուծույթ 96% 1լ | լիտր | 7 | 1370.0 | 9,590 |
| 41 | 33691133 | նատրիումի քլորիդ 10% լուծույթ / նատրիումի քլորիդ 10% լուծույթ 50մլ | ՖարմՏեք | Նատրիումի քլորիդ 10 % ջրային լուծույթ | հատ | 10 | 504.0 | 5,040 |

Այլ պայմաններ:

| | |
|---|---|
| Մատակարարման ժամկետը | Կողմերի միջև կնքված համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2021թվականի դեկտեմբերի 25-ը։<br>Պատվիրատուի կողմից պահանջի առաջացման օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում: |
| Մատակարարման հասցեն | ք. Երևան, Փափազյան 32 |
| Վճարման ժամանակացույց | Պատվիրատուի պահանջով մատակարարված ապրանքն ընդունելու օրվանից հաշված 20 (քսան) բանկային օրվա ընթացքում: |

| | |
|---|---|
| Դեղի պիտանելիության ժամկետը գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը | ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ:<br><br>բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը:<br><br>գ.առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը |
| | Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: Ապրանքների համար պարտադիր է ներկայացնել որակի սերտիֆիկատը կամ գործարանային փաթեթավորումը, եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար: |

**ԳՆՈՐԴ**

«Արաբկիր» մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ

ք. Երևան, Փափազյան 32

«Արարատբանկ» ԲԲԸ

ՀՀ 1510040795550100

ՀՎՀՀ՝ 00115079

Տնօրեն__________Ա. Քալանթարյան

/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Արֆարմացիա» ՓԲԸ

Ք. Երևան, 0064, Րաֆֆու 111

Հայէկոնոմբանկ ԲԲԸ

Հ/Հ163008100220

ՀՎՀՀ 02505735

Տնօրեն__________Ա. Հովհաննիսյան

/ստորագրություն/Կ.Տ